Վերապատրաստումներ GOVERN-TEMPUS ծրագրի շրջանակներում

Ֆինանսական կառավարում և ռազմավարական պլանավորում

2015թ. մայիսի 4-ին Հյուսիսային համալսարանում տեղի ունեցավ Եվրամիության ՏԵՄՊՈՒՍ ծրագրի «ԳՈՎԵՐՆ» նախագծի շրջանակում կազմակերպված վերապատրաստում բուհի կառավարման անձնակազմի, մասնավորապես ռեկտորի, պրոռեկտորների, վարչական կառույցների ղեկավարների և աշխատակիցների համար: Որակի ապահովման վարչության պետ Լիլիթ Զաքարյանը և բարեփոխումների գծով պրոռեկտոր Միեր Մակիչյանը խոսեցին 2014թ. Ավստրիայի Գրաց քաղաքում տեղի ունեցած վերապատրաստման մասին, փորձեցին ներկաներին փոխանցել այնտեղ եվրոպացի գործընկերներից ստացած նոր տեղեկատվությունը բուհերի ֆինանսական կառավարման և ռազմավարական պլանավորման վերաբերյալ:



Կրթական վերջնարդյունքներ

2015թ. մայիսի 7-ին Հյուսիսային համալսարանում տեղի ունեցավ Եվրամիության ՏԵՄՊՈՒՍ ծրագրի «ԳՈՎԵՐՆ» նախագծի շրջանակում կազմակերպված վերապատրաստում բուհի անձնակազմի, մասնավորապես դասախոսների, ուսումնական վարչության անդամների և որակի ապահովման վարչության աշխատակիցների համար: Որակի ապահովման վարչության պետ Լիլիթ Զաքարյանը և որակի ապահովման վարչության ավագ մասնագետ Ծովինար Ասատրյանը 2014թ. նոյեմբերի 12-16 Իտալիայի Պալերմո քաղաքում տեղի ունեցած վերապատրաստման ընթացքում ստացած իրենց գիտելիքները փոխանցեցին բուհի ավելի մեծ թվով աշխատակիցների: Վերապատրաստման թեմաներն էին կրթական վերջարդյունքներ, կրեդիտային համակարգ և այլն:

2015թ. մայիսի 15-ին Հյուսիսային համալսարանում տեղի ունեցավ Եվրամիության ՏԵՄՊՈՒՍ ծրագրի «ԳՈՎԵՐՆ» նախագծի շրջանակում կազմակերպված վերապատրաստում բուհի անձնակազմի համար: Ռոմանագերմանական և ռուս բանասիրության ամբիոնի վարիչ Անահիտ Ալավերդյանը և Իրավագիտության ամբիոնի վարիչ Անի Խեչոյանը ներկաներին փոխանցեցին Բելգիայի Լյովենի համալսարանում 2014թ. հոկտեմբերի 5-ից 9-ը կայացած վերապատրաստման ժամանակ ստացած տեղեկատվությունը: Քննարկման թեմաներն էին կրթական վերջնարդյունքներ, ուսանողակենտրոն ուսուցում և այլն: